Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

398.5
L-14

32.
Jsev.

398.5
Հ-14
2495-39
Հայրապետ
Հայրապետ
Գ. Հայր
III 3 857 10/IV 80
VII Ա 3884 23/IV 80
Ցա II-1183 11/X 80
1183
VII-366 19/XI

398.5
Հ-14
06 APR 2010
Printed in Turkey

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԱՍՊԱՆԱԿԻՐ

Բ

ՀՈԲՈՍ

Հաւաքեց

Ե. ՀԱԼԱՅԵԱՆ

ԹԻՓԼԻՍ
Տպարան Կ. Մարտիրոսեանցի
1903

56.764
34:04:203
1928

Дозв. ценз. Тифлисъ. 22 мая 1903 г.

2495
39

ՀՈՐՈՍ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հոբոսը Բոբշալուի գաւառի ձոճ-
կան գիւղացի է եղել։ Երբ այս
գիւղն անցել է Լոռիս-Մելիքեան-
ներին, սա չէ կամեցել կալուածա-
տիրական գիւղում ապրել, ուստի
և տեղափոխուել է Ձնոր գիւղը։
որ ձոճկանին շատ մօտ է։ Սա-
կայն ընոցիները նրան չեն ըն-
դունել, և նա ստիպուած մի առ
ժամանակ ապրել է Ձնորի հանդէպ
գտնուած այրում։ Ձկնորսութեամբ
ապրելով նա շատ անգամ ձուկ է
ընծայ տարել Ձնորի տանուտիրոջ,

մինչև որ կարողացել է նրա աչքը
քաղցրացնել իւր վրայ և հող սատ-
նալ։ Այստեղ վերաբնակուելով՝ նա
հետզհետէ հեղինակութիւն է ձեռք
բերել և նոյն իսկ ստանուտէր ըն-
տրուել։ Նա մեռել է անցեալ դա-
րի վաթսունական թուականներին։
Նրա իսկական անունը Յովհան-
նէս է եղել։ Նրա մտերիմ խորհրդ-
դականը եղել է Բերոն։ Հորոսը ներ-
կայանում է որպէս ամբողջ գիւ-
ղի ամենախելացի և առաջաւոր
անձը, միայնգամայն լինելով տըխ-
մարութեան տիպար։ Առհասարակ
Լօռում Զնող, Աբորի և մանաւանդ
Կուրդան գիւղերի բնակիչները տըխ-
մարի հռչակ ունին և ժողովուրդը
սրանց տխմարութիւնը մարմնացրել
է սրանց առաջաւոր մարդկանց՝
Հորոսի, Սերգօի և Կիկոսի մէջ։
Մինոյն առակը համարեա ան-
խտիր պատմւում է այս երկրի

մասին ևս, նայած թէ ո՞ր գիւ-
ղացիներին են կամենում ծաղ-
րել։

Printed in Turkey

Կալերի ժամանակ Հոբոսը տես-
նում է, որ Ձիլիմաքենի քարի կողմից մի սև ամպ է գալիս, մտածում է մի ճար անել, այդ ամպը գիւղ չթողնել, թէ չէ՝ անձրև-կանէ և իրենց գործերը կը խափանէ, Մտածում է, մտածում ու յանկարծ ձայն տալիս գիւղի իշխաններին՝ Բերոին Մարկոսին, Վարոսին, թէ տղերք ջան, յեգին արէք, տունը մի մարդ դուրս արէք, գնանք էն ամպը յետ տանք, թէչէ տուններուս կը քանդուի, էս գէշ վախտին անձրև կը գայ։

Իսկոյն այս իշխանները ձայն են տալիս գիւղացիներին և ամէն տնից

մի մարդ մի փայտ վերցրած գալիս հաւաքւում են Հոբոսի շուրջը: Սա էլ, իբրև տանուտէր, սրանց առնում և գնում, բարձրանում են ժայռի գլուխը և սկսում փայտերով ծեծել ամպին, յետ փախցնել: Մի քիչ յետոյ ամպը, չիրաւի, յետ էդ դառնում, միայն մի փոքրիկ ամպ Բերօի մօտով անցնում է դէպի գիւղ: Հոբոսը այս որ տեսնում է՝ ձեռի փայտով հասցնում է Բերօի գլխին, բղաւելով.

«Էդ Հորսելին վեր ես կալել, որ ամպի աղաքը ետ տաս, տեսնում չէս որ Հորսլու մատների ըրանքովը ամպը անցնում, գնում ա:»

Գիւղացիներն էլ հասկանալով, որ Հորսելու մատների միջով է ամպը անցել, իրենք էլ յարձակւում են, Բերօի վրայ և մի լաւ զնկում:[1])

---

[1]) Այս միևնոյնը Կուրդանեցի Սիկոսի մասին պատմելիս Բերօին փոխարինում է քահանան, որ մի լուծ է առած լինում ձեռին, ամպը անցել է սամինների ճակից:

Բ

Մի անգամ Հոբոսը տեսնում է, որ իւր եզը ժայռից գլորուեց ձորը, և գիտենալով որ այդ ձորից գլորուղին պրծնելիք չկայ, փաթաթւում է եափունջու մէջ, փակում աչքերը և գոռում. «Երազումս ըլի, երազումս»:

Գ

Մի անգամ Հոբոսը գիւղի իշխանների հետ կրակի շուրջը նստած և՝ տաքանում էին, և՝ գիւղի խէրն ու բարու մասին զրոյց անում:

Կրակը գնալով բորբոքւում էր ու սրանց ոտները վառում:

—Հոբոս ջան, կրակը ոտներս վա-

ռում է, ինչ անենք, հարցնում են գիւղի իշխանները։

—Աղջի, արի գնա դրսից մի քիչ ցեխ բեր, սրանց ոտներին ածա, որ չվառուի. հրամայում է Հոբոսը տան աղջկան։

Եւ մինչդեռ սա ցեխ է բերում և սրանց ոտներին ածում, ուրիշ գիւղից բերուած նորահարսը մօտենում է մինին և նշանով հասկացնում, որ կրակից մի քիչ հեռու նստի։ Սա նստում է և տեսնելով, որ այլ ևս ոտները չեն վառւում, խորհուրդ է տալիս միւս իշխաններին նոյնն անելու։ Բոլորն էլ մի քիչ յետ են քաշւում և տեսնելով որ կրակը էլ չի նեղացնում իրենց, սաստիկ զարմանում են օտար գիւղից բերած նորահարսի խելքի վրայ։

—Տեղովը խելք է մեր նորահարսը, պարծենում է նրա տէգրը։

—Բայց ինչպէս անենք, որ դրա

ունեցած խելքը չփախչի, հարցնում է իշխաններից մինը։

—Ի՞նչպէս անենք, կրկնում է խորհրդաւոր կերպով իմաստուն Հոբոսը, բերէք մխենք։

—Մխենք, մխենք, ձայն են տալիս իշխանները, վեր կենում, հարսին բռնում ու մի ահագին մեխ ճակատին տալիս, որ խելքը չփախչի [1])։

Մի անգամ Հոբոսը Բերօի և գիւղի քահանայի հետ գնում է գութանի համար փայտ կտրելու։ Ճանապարհին սրանք սկսում են վիճել, թէ ում կացինն է սուր, ամէն մինը իւրն է գովում, վերջապէս տեսնելով, որ մի ձիաւոր է անցնում,

---

[1]) Աստեղից է յառաջացել, կարծեմ, «դրա խելքը մխելու է» դարձուածքը։

կանգնեցնում են ու նրան հարցնում թէ ում կացինն է սուր։ Ձիաւորը առնում է ձեռքը կացինները, այս ու այն կողմ դարձնում և յանկարծ ձին քշում փախչում, տանելով կացինները։ Սրանք նրա ետևից են ընկնում, և թէպէտ նրան չեն հասնում, սակայն բռնում են ձիու քուռակը։

—Եկէք այս քուռակի մէջքը կոտրենք, ասում է Բերօն, որ չգընայ մօրը հասնի։

—Կոտրենք, համաձայնում է քահանան, բայց ինչպէս։

—Այդ էլ է բան, պատասխանում է Հոբոսը, շորերս հանենք ձգենք մէջքին կը կոտրուի, էլի։

Սրանք հանում են իրենց բոլոր շորերը, ձգում քուռակի մէջքին, միայն քահանան չի կամենում վարտիքը ևս հանել, որովհետև իբր քահանայ անպատշաճ է համարում։

Երբ բաց են թողնում քուռակին, կարծելով թէ արդէն մէջքը կոտրուել է և չի կարող քայլել, քուռակը փախչում գնում է, տանելով սրանց շորերը։

—Բա որ ասում էի թէ վարտիքդ էլ հանիր, ասում է Հոբոսը քահանային, եթէ հանած լինէիր, քուռակի մէջքը կը կոտրուէր, և մեր շորերն էլ չէր առնի փախչի. Երբ պէտք է սովորիք ձեր իմաստուն Հոբոսին ականջ դնել։ Հէ, ուրիշ ճար չկայ, այս մահակը ձեզ այդ կը սովորեցնէ, ասում է Հոբոսը և Բերօի հետ միասին մի լաւ թակում քահանային։

Ե.

Զնող մի նորահարս սեան կողքերից ձեռները մեկնում է և ալիւրի շտեմարանից ալիւր ածում մի ամանի մէջ, վերցնում. բայց երբ ուզում է հեռանալ, տեսնում է, որ սիւնը

ձեռների մէջ մնալով թոյլ չի տալիս։ Տնեցիներն իսկոյն վազում կանչում են Հոբոսին, որ մի խորհուրդ տայ, թէ ինչպէս ձեռներն ազատի։ Հոբոսը գալիս է, նայում, խոր մըտածում, ապա ասում.

«Սրան միայն երկու հնար կայ, կամ պէտք է սիւնը կտրէք, կամ ձեռքը, ուրիշ հնար չկայ։ Բայց աւելի լաւ է ձեռքը կտրէք, որովհետև եթէ սիւնը կտրէք՝ տունը կը քանդուի և բոլորիդ տակովը կանի»։

Ձարահատուած վերցնում են կացինը, որ Նորահարսի ձեռները կըտրեն, բարձրացնում են որ խփեն, հարսը երկիւղից բաց է թողնում ամանը և ձեռները յետ քաշում։

—Վահ, մի հնար էլ է եղել, բացականչում է Հոբոսը։

—

Զնողցի քահանան մի գիշեր գընում է Հոբոսի դէզից խոտ գողանալու։ Հոբոսը վրայ է հասնում և ասում.

—Տէր տեր, այդ ինչ ես անում։

—Թէ ոչինչ, տանում եմ, որ ձեր ննջեցեալների համար հոգոց ասեմ պատասխանում է քահանան։

Տար, տէր տէր ջան, տար, մի քիչ էլ աւելի տար, որ լիաբերան ասես, աւելացնում է Հոբոսը։

Մի կաչաղակ սովորել էր, գալիս Բերօի հաւերի ձուերը միշտ գողանում էր։ Ինչպէս է լինում, Բերօն բռնում է կաչաղակին և կանչելով Հոբոսին, գանգատւում է նրան, ու հարցնում, թէ ինչ տեսակ պատիժ տայ նրան։ Հոբոսն ասում է, թէ դեռ գնանք մի խնոցի առնենք,

.Ասոյ ես կասեմ, թէ դրա դատաստանը ինչպէս պիտի անենք։

Գնում հինգ բուբլի տալիս մի Հոյցի են առնում, Հոբոսը վերցնում կաչաղակը մէջն է դնում, ծակը ծածկում, և ապա Կայծոն բերդի Բողնանց քարի գլխից վայր գլորում։ Խնոցին քարերին դիպչելով կտոր կտոր է լինում ու կաչաղակը միջից դուրս թռչում։

Գիւղացիները այս տեսնելով բացականչում են. «Ա՜ տղէք, ստակեց ո՞չ»։

—Ստակեց ոչ, լաւ մի լաւ էլա վախեց, պատասխանում է Հոբոսը *)։

*) Այս միևնոյնը Կիկոսի մասին պատմելիս, աւելացնում են, թէ գիւղացիները Կիկոսի խորհրդով քանդում են կամուրջը, որ կաչաղակը չկարողանայ գիւղ գալ և ձու գողանալ, բայց երբ դարձեալ գալիս է՝ հետևում, բռնում են, և նոյն կերպ ժայռից գլորում։

Ը

Մի անգամ երկու նշանաւոր աշուղ են գալիս Ընող գիւղը։ Գիւղացիները հաւաքւում են, լսում նրանց, բայց չեն հաւանում։

«Ա՛խ մեր Հոբոս, ուր էր մէկ գար կապ ձգէր սրանց», ասում են այս ու այն կողմից։

Վերջապէս գնում են բերում, ամենալաւ տեղը նստեցնում ու խնդրում, որ մի բան երգի։ Հոբոսը նազ է անում, բայց ժողովուրդը աւելի ու աւելի է խնդրում, պաղատում, վերջապէս Հոբոսը զիջանելով նրանց թախանձանքին, ձեռնափայտը սաղ է անում և երգում.

Ողուէսն եկաւ լանճիկ, լանճիկ
Սիրտը ուզեց հաւի քարճիկ.
Ողուէսն եկաւ ճալա ճալա,
Վրայ թռայ կալչէն (ազդր) կալայ,
Բերի տուի մեր շներին,

Գլուխը ինչ օչին բերին *)։

—Ջան, ջան, ձէնիդ մատաղ, Հոբոս ջան, համա թէ ասիր հա՞, ըլթենց կապի դրանց է՞... բղաւեցին գիւղացիները։

Աշուղները տեսնելով, որ գիւղացիները յափշտակուեցան այս երգից ու Հոբոսի խռպոտ ձայնից, դարձան միմեանց ասին, թէ ինչ աւանակներ են սրանք։

Մօտ նստողներից մէնը հարցրեց, թէ աւանակ ինչին էք ասում։

*) Այս միւնոյնը Աքորեցի Սերգօի մասին պատմելիս երգը հետևեալ կերպով են ասում.

Սարբն բաշընդայ [1]) կանաչ խոտ օլուբ [2]),
Քեչինն [3]) բոյնուզի [4]) դանկի [5]) կոթ օլուբ
Մանդը - մունդը երկաթ խոփի զոդ օլուբ։

[1]) Գլխին. [2]) կըլինի. [3]) Այծի. [4]) եղջիւրը. [5]) դանակի.

—Աւանակ՝ մուշտակը վրէն կըտրին ման հկողին ենք ասում, բացատրում է մի աշուղը։

—Հէյ հէյ, աւանակ մեր պապերը տեսնէիք, պարծենում են շնողնեցիները, մենք ինչ աւանակ ենք։

Ճնողում մի փարախից (աղալ) ոչխարներ էին գողացել։ Գիւղացիները հաւաքուել էին և մտածում էին, թէ ով պէտք է գողացած լինի։ Երկար մտածելուց յետոյ երբ չկարողացան գտնել՝ մի քանիսն ասացին, թէ գնանք Հոբոսին կանչենք, նա կիմանայ։ Գնացին կանչեցին։ Հոբոսը եկաւ, նայեց ու ասաց.

—Ով բացել է փարախի դուռը՝ նա էլ գողացել է։

—Հա որ ասում էինք, թէ Հոբոսը կիմանա՞յ, պարծեցան Հոբոսի երկրպագուները։

Մի անգամ մի գոմէշ արտում ոտը կոտրում. ընկնում է վայր։ Գիւղացիները գալիս Հոբոսին խորհուրդ են հարցնում, թէ ինչ անեն։

«Ինչ պիտի անէք, ասում է Հոբոսը, դանակն այստեղ է, գնացէք քաշ տուէք բերէք այստեղ, մորթենք»։

Գնում քաշ են տալիս բերում, տեսնում են, որ հասկերը պառկեցին, դառնում ասում են Հոբոսին, թէ հապա մեղքը չենք, այնքան հասկեր պառկեցին, փչացան։

—Դէհ որ այդպէս է, խրատում է Հոբոսը, մէկ էլ այս կողմից քաշ տուէք տարէք, կը կանգնեն [1]։

---

[1]) Երևի այս առակից է յառաջացել «գոմէշը դանակի մօտ է տանում» դարձուածքը։

Մի անգամ Հոբոսը գութան վարելիս մի մողէս է լոյսն ընկնում։ Հոբոսը գութանը կանգնեցնել է տալիս և ձեռի չէկիով*) խփում մողէսն սպանում, ապա ինքնաբաւական կերպով սկսում է պեխերը սրել։

Հոտաղներից մինը հարցնում է. Ա՜ տղէք, այդ ո՞վ սպանեց։

—Դէհ չգիտէք, որ այդպիսի բաները միայն Հոբոսի ձեռից կըգան, էլ ի՞նչ էք հարցնում, պատասխանում է ինքը Հոբոսը։

Հոբոսի Ցուցրուկի գադուկի արտը հինգ վեց այծ են մտնում, որոնցից ամենափոքրը սպիտակ է լինում։

---

*) Պաճկալի ձեռքի այն փայտն է, որով խոփի վրայի հողը մաքրում են։

Հոբոսը սաստիկ բարկացած գնում բռնում է այս սպիտակ այծին և մի լաւ թակում ասելով. «Տо, անտէր, ասենք թէ սրանք ջահել լիճան են, խելքներուն հասնում չի, բա դու պռաւած, որ էդ ա մազդ Բերոի բիձա Վարոսի միրքի պէս սիպտակել ա, դու ի՞նչ ես ասում, որ էդ արտը ըրածում ես, քու հէրն ա ըշխատել, թէ դու»։

Մի անգամ Հոբոսը հունձ անելիս ձեռքը օրաղով [1]) կտրեց։ Տուն վերադառնալով գնաց շինող դարբնի մօտ և ասաց.

—Տо տնաւեր, որ գիտէիր օրաղիդ հունարը կտրիլն ա՝ էլ ուր ինձ տուի՞ր։

---

[1]) Օրաղ՝ մանգաղ։

Մի թուրք սար գնալիս իւր կաղ ուղտը մի Ընողեցու յանձնեց, որ պահի մինչև իւր վերադարձը։

Մի օր այս կաղ ուղտը արածելիս հետզհետէ հեռացաւ, բարձրացաւ քերծի ծայրին և երբ կամենում էր քերծի ծայրին բուսած ծառուտել ժայռի ծերպին բուսած ծառի տերևները՝ սայթակեց, գլորուեց ձորը և ընկաւ Դեբեթ գետը՝ խեղդուեց։

Ընողեցին գնաց քերթեց, կաշին ու գլուխը բերեց տուն, որ ժամանակին տիրոջը ցոյց տայ։

Աշնանը թուրքը էջաւ սարից և եկաւ Ընողեցու մօտ, ասաց.

«Դեավամ նէջա տը. դօստում, քէօքալը՞փ [1])»։

Ընողեցին թուրքերէն չգիտենա-

---

[1]) Ուղտս ինչպէս է, բարեկամ, չաղացել է։

լով՝ կանչեց Հոբոսին, նրան պատ-
մեց ուղտի գլխին եկած փորձանքը
և խնդրեց, որ մի առ մի հաղորդէ
Թուրքին։

Հոբոսն սկսեց.

—Թուրք ախպէր,
Դաւէդ քերծի գլխին արածը-
լերդի,
Կրծլանդի, կրծլանդի,
Ծառի ճիւղքը ծլծլանդի,
Ջուխտ ոտով դուրս պրծլանդի,
Երա դիւշտի թմփլանդի [1]),
Սուայ գիւշտի ղղլանդի [2]),
Ագեար ինանմերսան [3]),
Ռու բաշի [4]), բու դա կաշի,
Ըստար ափար, ըստար եշի [5]),

---

[1]) Գետին ընկաւ թրմփաց։
[2]) Ջուրն ընկաւ՝ ղղացրեց։
[3]) Եթէ չես հաւատում։
[4]) Ահա այս է գլուխը։
[5]) Ուզում ես տար, ուզում ես
նայէր։

Ե

Հոբոսը երեք աղջիկ է ունենում,
երեքն էլ կլաիկ (թլուատ)։ Մի ու-
րիշ գիւղից Հոբոսի երեւելի անունը
և նրա երեք աղջիկ ունենալը լսե-
լով գալիս են աղջիկներին տեսնե-
լու ու նշան տալու։ Հոբոսը տես-
նելով որ տղերքը նոյնպէս երեւելի
մարդկանց տնից են, մինը Ղազախի
Կողբա գիւղի Ալօ տանուտիրոջ,
միւսը Ալթօ դատաւորի, իսկ երրորդը
Ղուկաս երէցփոխի տղաներն են,
սաստիկ ցանկանում է, որ իւր կըլ-
տիկ աղջիկներին սրանց շըլընքին
կապէ, ուստի և խստիւ պատուի-
րում է աղջիկներին, որ մինչև հար-
սանիքի աւարտը ոչ փեսաների և
ոչ էլ մի որևէ մարդու հետ չը
խօսեն։

Երբ փեսացուները նստում են
հաց ուտելու, յանկարծ մի անկիւ-
նից մի մուկն է դուրս գալիս։ Այս

տեսնելով մեծ աղջիկը սխալմամբ ասում է. Վռուշ, հէն, հէն, մուտը, մուտը։ Միջնակն աւելացնում է. յետ ծատը նստաւ, իսկ ամենափոքրը խրատում է սրանց թէ՝ «Ատին ասաւ ոչ որ տասիխ ոչ, ես ոնչ տասել եմ, ոնչ տխասեմ»։

Փեսացուները տեսնելով որ երեք աղջիկն էլ թլուատ են, չեն նշանադրում և վեր կենում գնում են։ Հոբոսը սաստիկ բարկանում է աղջիկների վրայ ու նրանց տանից դուրս անում։

ԺԶ

Մի անգամ Հոբոսը Թիֆլիս գնալիս Կոտա գիւղում իջնում է ձիուց, մտնում մի գինետուն, մի կոպէկ շրջկացնում դախլի վրայ և ասում.

—Առ էս կոպէկը, համ մի գրուանքայ հաց տու, համ մի բաժին խաշ, համ էլ խուրդէն ետ տու։

—Ի՞նչ ես ասում, Զիբօ [1]), պատասխանում է խանութպանը։

—Թէ կայ՝ մի քիչ էլ զիբօ տու, վրայ է բերում Հոբոսը, կարծելով թէ զիբօ սխտոր է նշանակում։

ԺԷ

Մի անգամ Հոբոսը երկու քթոցձու է բարձել իշին ու տարել Թիֆլիս ծախելու։ Երբ սա փողոցում իւր էշը քշելով գնում էր, մի մարդ ետևից բղաւում է. Ա՜ մարդ, էշդ մի կողմ բռնիր, եզս գիժ է, կը խփէ։ Սա չի ուզում կատարել և քշում է էշը։ Մարդը նորից է բղաւում, բայց սա դարձեալ չի ուզում կատարել։ Եզը մոտենում է, խփում իշին, քթոցները վայր գլորում և ձուերը կոտրատում։ Սակայն Հոբոսը ոչ մի բանի ուշադրութիւն չդարձնելով՝ էլի իւր էշն է քշում*)։

---

[1]) Զիբօ նախատական մականուն է։

*) Երևի սրանից է յառաջացել. էլի իւր էշն է քշում դարձուածքը։

—Հոբոսը հիւանդացել էր ու պառկել։ Գիւղի իշխանները հաւաքուել էին նրա շուրջը և միմեանց հետ խօսելով մեծ ցաւ էին յայտնում, որ Հոբոսը մեռնելու է։

Էլ սրանից զէնը ում ենք դիմելու, ումից ենք խորհուրդ հարցնելու, ասում էին նրանք, Հոբոսն էր մեզ չարից, փորձանքից ազատողը, ճանապարհ ցոյց տուողը, գալող գնացողի առաջ պարզ երես հանողը. ինչպէս անենք, որ մահից ազատենք։

—Դարտ մի անէք, այ խալխը, ձայն տուեց Բերօն, դրան երկար ապրեցնելու հնարը ես գտայ։

—Ի՞նչ է, ինչ, ուրախացած ձայն տուին այս ու այն կողմից։

—Գնացէք դարբինին կանչէք, մի օղակ շինի ձգենք Հոբոսի գլուխը. որ պինդ պահի, չթողնի մեռնի։

—Ա՛յ խելօք ասացիր, ձայն տուին

այս ու այն զողմից ու վազեցին, դարբինին կանչեցին։ Դարբինն եկաւ, Հոբոսի գլխի չափն առաւ, գնաց մի լաւ օղակ շինեց և տաք տաք բերեց Հոբոսի գլխուն անցկացրեց։ Հոբոսը սաստիկ ցաւից ըստիպուած սկսեց ձեռներով ընդդիմադրել, բայց գիւղացիները վրայ թափուեցան և ձեռներն ու ոտները բռնեցին։ Խեղճը ուժասպառ լինելով՝ հոգին աւանդեց, և զրկեց շնողցիներին իմաստուն և ամենագէտ խորհրդատուից։

«Ազգային գրադարան»
NL0237691